

Սփիւոքի Նախարարի Հանդիպումը Մեկգոնեանցիներու Հետ

Գրեց՝ Կարո Գասապեան

Դեկտ. 6, 2008

Սփիւոքի նախարար Դոկտ. Հրանոյշ Յակոբեան, Երեքշաբթի, Նոյեմբեր 25, երեկոյեան, հանդիպում մը ունեցաւ Մեկգոնեան Սանուց Միութեան ներկայացուցիչներուն հետ, սրտաբան Տօքո. Յարութ Մեսրոպեանի դարմանատան գրասենեակին մէջ, Կլէմտէլլ: Հանդիպումը տեւեց մօտ մէկ ժամ:

Նախարարին կ'ընկերանար Լոս Անճելըսի Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր Հիւպատոս Տիար Արմէն Լիլոեան, "Մեկգոնեան Սանուց եւ Բարեկամներ" Միութեան կողմէ ներկայ էին՝ Ատենապետ՝ Քաֆի Յընծալեան, եւ վարչութեան անդամներէն՝ Տօքո. Յարութ Մեսրոպեան, Զօհրապ Ծամմասեան, Վահագն Ղարիպեան եւ Կարո Գասապեան, որոնք մեծարգոյ նախարարին ուշադրութեան յանձնեցին Կիպրոսի Մեկգոնեան Վարժարանին փակման հետ առ ընչուած կարգ մը հարցեր:

ՀԲԸՄիութեան Կեդրոնական Վարչութեան որոշումով Կիպրոսի Մեկգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ) փակումը, Յունիս 2005ին, իր բոլոր բացասական հետեւանքներով՝ անտարակոյս Սփիւոքի հրատապ հարցերէն մին է, եթէ ո՛չ ամէնէն հրատապը: Հետեւաբար պատշաճ պիտի ըլլար որ Սփիւոքի նախարարութիւնը առաջնահերթութիւն տար եւ զբաղէր այս հարցով:

4. Պոլսոյ Պատրիարքութեան առաջնորդութեամբ եւ աշխարհացրիւ Մեկգոնեան Սանուց Միութիւններու համատեղ ջանքերով վերջին երեք չորս տարիներուն, Մեկգոնեանի Փակումը կասեցնելու նպատակով ձեռք առնուած դատական եւ այլ գործողութիւններ Լոս Անճելըսի եւ Կիպրոսի մէջ՝ որեւէ դրական արդիւնք չի տուին: Դատական գործողութիւնները վերջացան՝ յօգուտ ՀԲԸՄիութեան:

Կիպրոսի դատարանը վճռեց եւ ճշդեց Մեկգոնեանի կալուածներուն ՀԲԸՄիութեան պատկանելիութիւնը եւ իրաւասութիւնը՝ այդ կալուածները ըստ կամս տնօրինելու: Ուրեմն Մեկգոնեանի շուտափոյթ վաճառքը բացայայտ էր եւ անշուշտ կարելի պիտի դառնար եթէ Կիպրոսի Սանուցի նախաձեռնութեամբ չիրագործուէր հետեւեալը.

Կիպրոսի Կառավարութիւնը, գիտակցելով ՄԿՀ ի պատմական, մշակութային, ազգային արժէքին՝ Կիպրոսի երեսփոխանական ժողովը, միաձայնութեամբ յատուկ հրամանագրով մը (Մարտ 31, 2008) հաստատեց Մեկգոնեանի շէնքերուն եւ ընդհանուր տարածքին (շուրջ 40 էքըր) 60% ին անձեռնմխելութիւնը իբրեւ պատմաճարտարապետական ազգային ժառանգութիւն ներառ եալ յարակից պուրակը "կանաչ գօտի": Այս կանոնագրութիւնը, թէեւ կը նուազեցնէ Մեկգոնեանի կալուածներուն դրամական արժէքը, այսինքն, Կիպրոսի կառավարութիւնը կը հարուցէ այնպիսի խոչնդոտներ, որոնք ապագայ սեփականատէրը ի վիճակի չըլլայ հաղթահարել ու կը խոչընդոտէ զայն վաճառելու կարելիութիւնը: Օրէնքը նոյնպէս խստի կ'արգիլէ կալուածի որեւիցէ ձեւափոխում:

Մեկգոնեանը պէտք չէ՛ ընկալել սոսկ որպէս կրթական հաստատութիւն, որ մօտ 80 տարիներ շարունակ եղաւ մարդակերտումի, հայակերտումի եւ ազգապահպանման լաւագոյն կրթօճախներէն մին, սփիւոքի մէջ: Արդարեւ, ան "վրէժ լուծելու" համար հիմնուած հաստատութիւն մըն է ամէն բանէ առաջ: Ազգային մեծագոյն բարերար Կարապետ Մեկգոնեանի հետեւեալ խօսքերը որքան դիպուկ է եւ յիշատակելի. " ես այս դպրոցը կը շինեմ Ազգիս վրէժը լուծելու համար...Թուրքը մեզ մաղէ անցուց, ջարդեց նախ մեր մեծերը, մեր վարիչները, ու ապա՝ մեր ամբողջ անտէր ազգը... Այդ որբ ձագուկները պէտք է իրենց հօրեանական տունը նորէն շինեն, եւ անոնցմէ պէտք է պատրաստենք մեր մեծերը...չքաւոր հայ երիտասարդներու կրթութեան ապահովումը որ կարենան կեանքի մէջ յաջողին...Կը փափաքիմ որ Մեկգոնեան Կրթական այս հաստատութիւնները տեսնն դարէ դար եւ ըլլան լուսատրութեան վառարաններ տալու համար հայ ազգին, հայ հայրենիքին եւ մարդկութեան օգտակար եւ պարկեշտ

նկարագիրով անդամներ”։ Այս էր բարերարին տեսլականը, ու այդ նպատակով բարերարներ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեաններ կտակեցին վիթխարի մեծ գումար մը մօտ 600,000 անգլիական ոսկի մեր օրուայ սակով շուրջ մէկ ու կէս միլիար ամերիկեան տոլար, որուն տոկոսով հաստատութիւնը պիտի տներ դարէ դար։ 1926ին Մելգոնեանը կը բացուէր որպէս որբանոց, 1915-1923 Հայոց ցեղասպանութենէն ճողոպրած բազմաթիւ որբեր պատսպարելու համար։ Այնուհետեւ հարիրաւոր որբեր Մելգոնեան ապաստան կը գտնեն, սնունդ եւ ուսում կստանան։ Մելգոնեանի զոյգ շէնքերուն յառաջամասը, կայ պուրակ մը, հարիրաւոր շոճի ծառերով։ Այս ծառերը տնկուած են նոյն այդ որբ աշակերտներու որբ ձեռքերով՝ ի յիշատակ իրենց սիրելիներուն եւ մեծ եղեռնի բիրաւոր նահատակներուն։ Այս պուրակը վկայարան մըն է պարզապէս առաջին “յուշակոթողը” մեծ եղեռնի զոհներուն յիշատակը յատեցանով։ Ուրեմն Մելգոնեան հաստատութիւնը սերտօրէն կապուած է եւ մաս կը կազմէ 20րդ դարու հայ ժողովուրդի ցեղասպանութեան, պատմութեան, եւ զայն ծախելու հարցը, միանգամընդմիջտ պէտք է մտահան ընել, ինչքան ալ բարձր ըլլայ այդ կալուածներուն գինը։

Մեծ դեր վիճակուած է հայկական վարժարաններուն՝ պահպանելու համար արեւմտահայերէն լեզուն եւ մշակոյթը որոնք վտանգուած են եւ ենթակայ պիտի ըլլան անհետացման եթէ չկարենանք բաց պահել մեր վարժարանները սփիւռքի մէջ։ Կարգ մը երկիրներու մէջ տեղական լեզուները այնքան գերիշխող դարձած են եւ օտարախօսութիւնը համատարած որ զոյութիւն ունեցող Սակաւաթի հայկական վարժարանները գրեթէ անզօր կը մնան ուսուցանելու մեր մայրենին։ Մելգոնեան՝ ըլլալով միակ գիշերօթիկ երկսեռ հաստատութիւնը արտերկրի մէջ՝ պէտք է որ վերաբացուի, որպէսզի ան կարենայ շարունակել իր առաքելութիւնը որպէս ամբողջ հայեցի դաստիարակութեան։ Կրթական հաստատութիւն մը կարծեւորով իր հունձքով միայն։ ՀԲԸՄիութեան կողմէ ծրագրուած Հայաստանի մէջ հիմնուելիք “Մելգոնեան Կրթական Կեդրոն” երիտասարդական համալիրը պիտի կարենա՞յ Կիպրոսի ՄԿԷ ի դերը ստանցնել զայն փոխարինելով։ Հայաստանի Մելգոնեան համալիրին մասին տրուած կցկտոր տեղեկութիւնները հաւատք եւ յոյս չեն ներշնչեր, տրուած ըլլալով որ ծրագիրը տակաւին մինչեւ հիմա չէ յստակացած եւ խարխալաբայ կ’ընթանայ։ Կ’ըսուի թէ հոն պիտի հիւրընկալուին աշխարհի տարբեր երկիրներէ շուրջ 200 ուսանողներ որոնց դասաւանդուի հայոց լեզու, հայ գրականութիւն, հայոց պատմութիւն, որոնք պիտի նպաստեն հայապահպանութեան եւ հայեցի դաստիարակութեան, եւ այս բոլորը՝ առանելագոյն վեց ամիս հերթականութեամբ։

Մելգոնեանը իր բացառիկ աշխարհագրական դիրքով Կիպրոսի նման հիւրընկալ եւ բարեացակամ երոպական երկրի մը մէջ՝ որպէս անդամ Եւրոպական Միութեան՝ դէպի եւրոպա բացուող Դուռ մը կրնայ ըլլալ Հայաստանի համար։ Հայաստանէն ամէն տարի որոշ թիւով ուսանողներու ներգրաւումը Մելգոնեանէն ներս՝ ոչ միայն պիտի սատարէ որ անոնք ստանան բարձրորակ երկրորդական ուսում եւ պատրաստուին եւրոպական եւ Ամերիկեան համալսարաններ ընդունուելու, մասնագիտութիւններ ձեռք բերելու ու վերադառնալ Հայրենիք ու ծառայեն անոր յառաջդիմութեան եւ բարքավանման, այլնաեւ պիտի նպաստէ Սփիւռք-Հայաստան կապերու առ աւել սերտացման։

Սփիւռքի Նախարարուհի Տիկին Հրանոյշ Յակոբեան եւ Հայաստանի ընդհ. Հիւպատոս Պրն Արմէն Լիլոեան ուշի ուշով հետեւեցան տրուած լուսաբանութիւններուն եւ սրտցաւ հասկացողութիւն ցուցաբերեցին Մելգոնեանը վերաբացուած տեսնելու համար աշխարհացրի Մելգոնեանցիներուն տարած աշխատանքներուն առթիւ։

Տիկին Յակոբեան այս հանդիպումին ամբողջ տեսողութեան նօթագրութիւններ առաւ եւ հաւաստիացուց որ Մելգոնեանի հարցը անպայման պիտի յանձնէ Հայաստանի նախագահ Սերճ Սարգսիսեանին եւ Վարչապետ Տիգրան Սարգսիսեանին լուրջ նկատողութեան։ Իր խօսքերով ըսաւ “ Ես որպէս ձեր ներկայացուցիչը, պարտաւոր եմ ներկայացնելու Մելգոնեանի հարցը հանրապետութեան նախագահին, Վարչապետին եւ անձամբ պիտի հանդիպիմ ՀԲԸՄի Կեդրոնը Լուիզ Սիմոնին եւ Պերն Սեդրաքեանին, Մելգոնեանը վերաբանալու կապակցութեամբ, ապա Մելգոնեանի հարցով պիտի հանդիպիմ Կիպրոսի կարավարական պատասխանատու անձերու հետ եւս։ Ես կը հաւատամ հայ լեզուն պահելը ազգապահպանման անհրաժեշտ գրական մըն է։ Ինձի ծանօթ է Մելգոնեանի Կատարած ազգաշէն նպաստը հայութեան “։ Սփիւռքի նախարարուհին, այս առթիւ, Սփիւռքի մէջ դպրոց փակելու դէմ եւս արտայայտուեցաւ։

Մասնավոր Շնորհակալություն Տիկին Յակոբեանին որ իր սուղ ժամանակէն բաժին յատկացուց հանդիպելու եւ լսելու Մելգոնեանցիներու մտահոգութիւններն ու խնդիրները: Բայց շնորհակալութիւն մանաւանդ Մելգոնեանի հարցով աշխատելու եւ այդ հարցին բարուք լուծում գտնելու իր յանձնառութեան համար:

Շնորհակալութիւն եւս Հայաստանի գլխավոր Հիւպատոս՝ Պրն. Արմէն Լիլոեանին որ համբերութեամբ ունկրդորեց Մելգոնեանի մեր մտահոգութիւնները:

